EU4Regions: Աջակցություն Հայաստանում տարածքային զարգացման քաղաքականությանը
EU4Regions: Support to Regional Development Policy in Armenia

Եվրոպական միությունը Հայաստանի համար
European Union for Armenia

Իրականացվում է ՀՀ Կառավարության հետ համատեղ
Implemented in partnership with the Government of Armenia

# ԵՄ-Ն ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՐԶԵՐԻ ՀԱՄԱՐ
# EU FOR REGIONS OF ARMENIA

**Հուլիս 2019թ.** (Թողարկում 2/ 2019)
**July 2019** (Issue 2/2019)

## Կիզակետ

### Հարցազրույց Հայաստանում ԵՄ դեսպանի հետ

Տարածքային զարգացման քաղաքականությունը Հայաստանում արդեն մեկ տասնամյակ շարունակ մեծապես աջակցություն է ստացել Եվրոպական միության կողմից: Վերջին տարիներին օժանդակությունն ակտիվացել է և ընդգրկում է ռազմավարական, ծրագրավորման և կարողությունների զարգացման տարրեր, որոնք իրականացվել են ռեգիոնալ ծրագրերի պիլոտային դրամաշնորհային ծրագրի միջոցով և տեխնիկական աջակցության միջոցով, որն ընդգրկում է քաղաքական և գործնական բոլոր ասպեկտները:

Տեղեկագրի այս թողարկման մեջ ուրախ ենք ձեզ հետ կիսվել Հայաստանում տարածքային զարգացման քաղաքականության վերաբերյալ Հայաստանում Եվրոպական միության դեսպան պարոն Պյոտր Սվիտալսկիի պատկերացումներով, ով մարզերի ուժեղացման և տեղական դերակատարների հզորացման մեծ կողմնակից է: Դեսպանի հետ հարցազրույցը ներկայացված է 2-3 էջերում:

*Ավելի մանրամասն՝ ներսում ...*

## IN FOCUS

### Interview with EU Ambassador to Armenia

Regional Development policy in Armenia has been extensively supported by the European Union for over a decade now. In recent years, the support has been intensified and encompassed strategic, programming and capacity building elements, delivered through the pilot grant scheme for regional projects and technical assistance covering all policy-related and practical aspects.

In this edition of the newsletter we are happy to share with you the reflections on Regional Development policy by the European Union's Ambassador to Armenia, Mr. Piotr Świtalski, who has been a great supporter of strengthening the provinces and empowering the local actors. The interview with the Ambassador is presented on pages 2-3.

*More details inside…*



*ՏԶՌԿ 1-ին դասընթացը 2019թ. հունիսի 20-22-ին Ծաղկաձորում - 26 մասնակից*
*SMRD Workshop 1 on 20-22 June 2019, Tsaghkadzor - 26 participants*

Հայաստանի տարածքային զարգացման ռազմավարության վերանայումը սմարթ մասնագիտացման ռազմավարության մոտեցման ինտեգրմամբ աջակցություն է ստանում «Տարածքային զարգացման ռազմավարական կառավարում» (ՏԶՌԿ) մասնագիտական զարգացման ծրագրի կողմից:

The revision of the Armenian Regional Development Strategy with integration of Smart Specialisation Strategy approach is supported by the Professional Development Programme "Strategic Management in Regional Development" (SMRD).

## ՆԱԽԱԲԱՆ

Սա «ԵՄ-ն Հայաստանի մարզերի համար» տեղեկագրի երկրորդ թողարկումն է, որտեղ մենք շարունակում ենք Ձեզ հետ կիսվել տարածքային զարգացման քաղաքականության թեմաներով և երկրում ու դրանից դուրս առկա հեռանկարներով: Դրա շնորհիվ հուսով ենք, որ Ձեզ և Ձեր կառույցներին կտրամադրենք հետաքրքիր նորություններ և պատկերացում ՏԶ քաղաքականության և դրա կիրառման մասին միջազգային, ազգային և մարզային/ տեղական մակարդակներում: Մենք տեղեկագիրը դիտարկում ենք ոչ միայն որպես տեղեկատվության աղբյուր, այլև անկեղծորեն հավատում ենք, որ այն կնպաստի տարածքային զարգացման համար ավելի մեծ գիտելիքների և կարողությունների զարգացմանը:

«Էկորիս Նեդերլանդ ԲՎ»-ի անունից, որը տրամադրում է տեխնիկական աջակցություն Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող **«EU4Regions: Աջակցություն Հայաստանում տարածքային զարգացման քաղաքականությանը»** ծրագրի ներքո, ինչպես նաև մեր տեխնիկական աջակցության ամբողջ թիմի անունից հրավիրում եմ Ձեզ ընթերցելու, տեղեկատվություն ստանալու և, հուսով եմ, ոգեշնչվելու:

**Ռոբերտ Գիրեյկո,**
*Թիմի ղեկավար / գլխավոր փորձագետ և տարածքային զարգացման խորհրդական*

## FOREWORD

**Dear Readers,**

This is the second issue of the newsletter "EU for Regions of Armenia" in which we continue to share with you Regional Development policy topics and perspectives in the country and beyond. By doing so, we hope to provide you and your institutions with interesting news and insights into RD policy and its practical application at the international, national and regional/local levels. We consider the newsletter not only a source of information but sincerely believe it will contribute to greater knowledge and capacities for Regional Development.

On behalf of Ecorys Nederland BV which provides technical assistance under the EU-funded project **"EU4Regions: Support to Regional Development Policy in Armenia"** and on behalf of our whole Technical Assistance Team, I invite you to reading, getting information, and hopefully, getting inspired!

**Robert Girejko,**
*Team Leader / Key Expert - Regional Development Advisor*

*Այս ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից: Իրականացվում է ՀՀ կառավարության հետ համագործակցությամբ: Անմիջական շահառուն ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունն է: Ծրագիրն իրականացվում է ԷԿՈՐԻՍ Նեդերլանդ ԲՎ-ի տեխնիկական աջակցության կողմից: Նյութում տեղ գտած դիտարկումներն ու կարծիքները չեն արտացոլում Էկորիսի, ՀՀ կառավարության կամ Եվրոպական միության տեսակետները:*
*This project is funded by the European Union. It is implemented in partnership with the Government of Armenia. The direct beneficiary is the Ministry of Territorial Administration and Development. The project is implemented by ECORYS Nederland BV technical assistance. Views and comments in this material do not necessarily reflect the official views of Ecorys, the Government of Armenia, or the European Union.*

# Հզորացնենք տեղական դերակատարներին

## Հարցազրույց Հայաստանում Եվրոպական միության արտակարգ և լիազոր դեսպան **պարոն Պյոտր Սվիտալսկիի հետ**



***Հարց.*** *Հարգելի պարոն դեսպան, դուք 2015 թվականից ի վեր ներկայացնում եք Եվրոպական միությունը Հայաստանում: Որո՞նք են ձեր առաջին տպավորություններն ու դիտարկումները երկրի սոցիալ-տնտեսական կառուցվածքի վերաբերյալ:*

**Պատասխան**. Հայաստանի վերաբերյալ առաջին տպավորություններս բավականին ապշեցնող էին: Ինձ թվում էր, թե երկու Հայաստան կա, մեկը՝ բավականին հարուստ ու զարգացած մայրաքաղաք Երևանը, մյուսը՝ աղքատ և անտեսված՝ գավառական, գյուղական Հայաստանը: Ես տեսա դատարկված գյուղեր, որտեղից գնացել են գրեթե բոլոր երիտասարդ տղամարդիկ, և միայն կանայք, տարեցներն ու երեխաներն են մնացել՝ խնամելու իրենց տնային տնտեսությունները: Նման ծայրահեղ անհամաչափությունները վատ են ցանկացած երկրի համար: Ինձ համար ակնհայտ դարձավ, որ մայրաքաղաքի և մարզերի միջև այս բացը փակելը պետք է դառնա Եվրամիության՝ Հայաստանին ցուցաբերվող աջակցության առաջնահերթություն:

Հարստության և եկամուտների մեծ անհամապատասխանություններ դիտարկվել են հետխորհրդային շատ երկրներում: Հայաստանի վրա բացասաբար է ազդել հատկապես ուղեղի արտահոսքը և աշխատանքային միգրացիայի բարձր մակարդակը: Հայաստանի տնտեսության հետխորհրդային անկումից տուժեց ոչ միայն արդյունաբերությունը, այլև գյուղատնտեսությունը, քանի որ գյուղատնտեսական նշանակության հողերի միայն մոտ 50 տոկոսն է որոշակիորեն օգտագործվում: Այս ժամանակահատվածը համընկավ նաև համաշխարհային տնտեսության խորքային կառուցվածքային փոփոխությունների հետ, որտեղ Խորհրդային Միության ժամանակաշրջանի խոշոր արդյունաբերությունները այլևս չեն կարող պահպանվել: Նոր պայմաններում անհրաժեշտ էր խորը վերաձևակերպում: Այնուամենայնիվ, Հայաստանում տեղի ունեցավ այն, որ կենտրոնացում դրվեց տնտեսության գոյատևման ռազմավարության վրա, ինչը ենթադրում էր պահպանել պետության հիմնական կարիքները, մասնավորապես պաշտպանության ոլորտում՝ հաշվի առնելով դժվար աշխարհաքաղաքական իրավիճակը: Առանց ընդարձակ կառուցվածքային բարեփոխումների, օլիգարխիկ տարրեր հայտնվեցին և կապ հաստատեցին քաղաքական համակարգի հետ: Հաշվի առնելով այս ամենը, ինչպես նաև օտարերկրյա զգալի ներդրումների բացակայությունը՝ երկրի տարածքների միջև ստեղծվեց մեծ անհամաչափություն:

***Հարց.*** *Եվրոպական միության համախմբման քաղաքականությունը նշանակալի դեր ունի՝ օգնելու թույլ զարգացած շրջաններին ,հասնելե մյուս տարածաշրջանների մակարդակին: Ձեր կարծիքով որո՞նք են Հայաստանի համար այս քաղաքականության կարևորագույն ուսուցողական կետերը:*

***Պատասխան.*** Իմ կարծիքով Եվրոպական միության համախմբման քաղաքականության հիմնական առավելությունը տեղական ինքնակառավարման մարմինների հզորացումն է: Ես միշտ ասել եմ իմ հայ գործընկերներին, որ տարածքային զարգացման քաղաքականությունը երբեք չի հասնի ակնկալվող արդյունքներին՝ առանց կենտրոնանալու սուբսիդիարության վրա և առանց տեղական իշխանությունների ուժեղացման: Հայաստանում տարածքային զարգացման հարցերով զբաղվելիս ԵՄ-ի համար առաջնային դժվարությունը հանդիսանում էր տեղական իշխանությունների հետ ուղղակիորեն կապ հաստատելը:

Քաղաքականության ներդրման վաղ փուլերում (2016թ.) մշակված և ընտրված ՏԶ պիլոտային ծրագրերը շատ կարևոր էին՝ ցույց տալու, որ Երևանից դուրս օգտակար գործեր կարող են իրականացվել տեղացիների և տեղական իշխանությունների կողմից: Ավելին, Եվրոպական հանձնաժողովի հարևանության քաղաքականության և ընդլայնման բանակցությունների հարցերով ԵՄ հանձնակատարի՝ պարոն Յոհաննես Հանի անձնական աջակցությամբ հնարավոր եղավ մշակել 2018թ. ԵՄ տարեկան ծրագիրը ՀՀ երեք հյուսիսային մարզերում՝ Լոռի, Շիրակ և Տավուշ, տարածքային զարգացման առաջընթացի գաղափարի շուրջ՝ դրանով իսկ կենտրոնացնելով ջանքերը Հայաստանի ամենաքիչ զարգացած և աղքատ մարզերի վրա: Այս ծրագրի համար, չնայած ֆինանսավորումը չէր կարող ուղղակիորեն տեղական իշխանություններին տրամադրվել, քաղաքապետերը և մարզպետները սերտորեն ներգրավված էին առաջնահերթություններն ընտրելու գործում: Բացի այդ, ԵՄ-ն մտադիր է նպաստել տեղական համայնքներում մասնակցային (քաղաքացիական) բյուջետավորման գործընթացին, և հատուկ միջամտություն է նախատեսվում ԵՄ 2019թ. տարեկան ծրագրի՝ «Տեղական դերակատարների հզորացում զարգացման համար» (LEAD) շրջանակներում՝ ուղղված տեղական իշխանություններին՝ աջակցելու իրենց ներքևից-վերև գործողություններին:

Տեղական իշխանություններին ավելի շատ արտոնությունների և ֆինանսավորման տրամադրումը եղել և դեռևս շարունակում է մնալ անհրաժեշտություն: Ի տարբերություն որոշ հայ պաշտոնյաների նախնական մեկնաբանությունների առ այն, որ տեղական իշխանությունները թույլ, ոչ հուսալի և կոռուպցիայի ազդեցության տակ են գտնվում՝ իմ փորձը ցույց է տվել, որ մարզերում կան մարդիկ, ովքեր լավ են հասկանում տեղական կարիքներն ու հնարավորությունները և լիովին հանձնառու են դրական փոփոխություններ բերելու: Նույնիսկ հեղափոխությունից առաջ կառավարությունը սկսեց մտածել ապա-

# Empower local actors!

## Interview with His Excellency Ambassador of the European Union to Armenia **Mr. Piotr Świtalski**

***Question:*** *Dear Mr Ambassador, you have been representing the European Union in Armenia since 2015. What were your first impressions and observations regarding the socio-economic fabric of the country?*

***Answer:*** My first observations of Armenia were quite striking. It appeared to me as if there were two Armenias: one quite affluent and developed – the capital city of Yerevan, the other one poor and neglected – the provincial, rural Armenia. I saw depopulated villages with almost all young men gone and only women, elderly and children left to take care of their households. Such severe discrepancies would be bad for any country. It became obvious to me that closing this gap between the capital city and the provinces should become the priority for European Union's assistance to Armenia.

Large wealth and income discrepancies have been observed in most post-Soviet countries. Armenia has been particularly badly affected also by the brain drain and a high level of labour migration. The post-Soviet implosion of the economy in Armenia affected not only the industries but also agriculture with as low as only some 50% of arable lands being used productively at some point. This period also coincided with deep structural changes to the global economy where the heavy industries of the Soviet era could not be maintained anymore. Under the new conditions a profound restructuring was needed. However, what happened in Armenia was to focus on economic survival strategy that would sustain the basic needs of the state, in particular the defence sector, given the difficult geopolitical situation. Without extensive structural reforms, the oligarchic elements appeared and became linked to the political system. All this, given the lack of significant foreign investments, created heavy disbalances among the territories of the country.

***Question:*** *The European Union cohesion policy has a prominent role in helping the least developed regions in "catching up" with other regions. In your opinion, what are the most important learning points from this policy for Armenia?*

***Answer:*** In my opinion, the main advantage of the European Union cohesion policy is the empowerment of local government structures. I was always telling my Armenian counterparts that regional development policy will never bring the expected results without focusing on subsidiarity and without making the local governments stronger. The initial difficulty for the EU working on regional development in Armenia was not being able to get into direct relations with local authorities but only the central government.

The pilot RD projects devised and selected in the early stages of the policy introduction (2016) were very important to show that outside of Yerevan useful things can be done with the local people and by the local authorities. Moving forward, with the personal support of the EU Commissioner for Neighbourhood and Enlargement Negotiations, Mr Johannes Hahn, it was possible to build the EU Annual Programme of 2018 on the idea of progressing regional development in the three northern provinces (Lori, Shirak and Tavush), thus concentrating efforts on the least developed, poorer regions of Armenia. For this programme, although funding could not be provided directly to local governments, the mayors and governors were closely engaged in selecting the priorities. In addition, the EU is planning to promote participatory (civic) budgeting in local communities and a special intervention is foreseen under the EU Annual Programme 2019 addressed to local authorities to support their bottom-up actions: Local Empowerment of Actors for Development (LEAD).

What has been and is still necessary, is to strategically delegate more prerogatives and funding to local authorities. Contrary to the initial comments from some Armenian officials about the local governments being weak, not reliable, and affected by corruption, my experience has shown that in the regions there are people who understand well the local needs and opportunities, and are fully committed to bringing about positive changes. Even before the revolution, the Government started to consider ways of decentralisation. Today, Armenia is

կենտրոնացման ուղիների մասին: Այսօր Հայաստանը շարունակում է մնալ այդ ճանապարհի սկզբում: Տեղական ինքնակառավարման վերջին խոշորացումները (տարածքային ընդլայնումը) պետք է ընդունել առանց նախապաշարմունքների, ոչ թե որպես ինքնանպատակ, այլ որպես տեղական կառավարություններին ավելի շատ դեր տալու հնարավորություն նրանց հզորացնելու համար:

***Հարց.*** *Պարոն դեսպան, Դուք շատ ակտիվ եք եղել Հայաստանում տարածքային զարգացման քաղաքականության խթանման գործում: Կարո՞ղ եք բացատրել՝ ինչու:*

***Պատասխան.*** Ես ծնվել եմ Լեհաստանի մի փոքրիկ քաղաքում և ինձ համարում եմ գավառաբնակ: Այդպիսով, ես հիշում եմ, թե զարգացման բացերը ինչպես կարող են բացասաբար անդրադառնալ փոքր քաղաքների և գյուղերի բնակիչների վրա, դրանք հանգեցնում են լճացման, վրդովմունքի, օտարման և, ի վերջո, արտագաղթի: Իհարկե, արտագաղթը երբեք չպետք է լինի միակ տարբերակը: Տարածքային զարգացման քաղաքականության իմ հեռանկարները որոշ չափով ներշնչված են անձնական փորձից, բայց ավելի կարևոր է այն, որ դրանք ձևավորվել են առաջատար տնտեսագետների և սոցիոլոգների կողմից, ինչպիսին է՝ Թոմաս Պիկետին: Մի խոսքով, ծայրահեղ անհամաչափությունները խոչընդոտում են զարգացմանը և ոչնչացնում են երկրի սոցիալական կառուցվածքը: Իմ որոշ հրապարակումներում ես գրել եմ հասարակության վրա անհամաչափության ազդեցության մասին:

Ես մեծապես հավատում եմ արդար հասարակություններին և ոգևորվում եմ այնպիսի հանրային քաղաքականությունների արդյունքներից, ինչպիսիք են ԵՄ համախմբման քաղաքականությունը, որը հակադարձում է ծայրահեղ անհամաչափությանը, ինչպես ցույց է տալիս Գինի գործակցի[1] նվազումը, և օգնում է ԵՄ-ի նոր անդամ պետություններին «հասնել» առավել զարգացած երկրների մակարդակին: Հայաստանը նույնպես կարող է հաջողության հասնել անհամաչափությունների նվազման հարցում:

***Հարց.*** *Այս տարի տարածքային զարգացման պիլոտային դրամաշնորհային բազմաթիվ ծրագրեր, որոնք ֆինանսավորվել են Եվրոպական միության կողմից Հայաստանի տարբեր մարզերում, ավարտվում են: Որո՞նք են ձեր դիտարկումները այս ծրագրերի և նրանց արդյունքների վերաբերյալ:*

**Պատասխան.** Ես շատ ուրախ եմ, որ ՏԶ պիլոտային այդ ծրագրերը բերում են արդյունքներ: Սկզբում շատ մտահոգված էի նրանց բարձր ռիսկերով: Օրինակ՝ Կապանում պլաստիկ թափոնների վերամշակման և արդյունավետ օգտագործման հետ կապված ծրագիրը[2] հստակորեն պահանջում էր փոխել բնական միջավայրի վրա մարդկային և տնտեսական ազդեցությունն անտեսելու տարածված մշակույթը և շատ սահմանափակ հնարավորությունները՝ քաղաքային թափոնների կառավարման համար:

Այս ծրագրերի հաջող ավարտը շատ քաջալերող է, սակայն վերջնական արդյունքները կդառնան տեսանելի երկարաժամկետ հեռանկարում: Հուսով եմ, որ այդ պիլոտային ծրագրերը կունենան նաև մոբիլիզացնող ազդեցություն՝ ոգեշնչելով այլ ծրագրերին, որոնց միջոցով կխրախուսվի հանրային-մասնավոր գործընկերությունը: Դրա լավ օրինակ է Վայոց ձորի մարզի ֆոտովոլտային էներգիայի արտադրությունը[3], որը, երբ ավարտվի, կարող է հեշտությամբ վերարտադրվել երկրի այլ մասերում: Այս նախաձեռնության ավելացված արժեքն այն է, որ ֆոտովոլտային էլեկտրակայանի շահույթը կուղղվի տեղական համայնքների զարգացման ծրագրերին՝ ստեղծելով դրական շղթայական ռեակցիա:

Չնայած մենք հաստատում ենք ՏԶ պիլոտային ծրագրերի դրական արդյունքները, դեռևս պետք է հստակ գնահատում և քննարկումներ անցկացնենք կառավարության և տեղական կառավարման մարմինների հետ քաղված դասերի վերաբերյալ՝ ապագայի համար ռացիոնալ եզրակացություններ կատարելու, ինչպես նաև Հայաստանում ՏԶ քաղաքականության բարելավման համար:

***Հարց.*** *Վերջում, քանի որ Հայաստանում Ձեր առաքելությունը հասնում է իր ավարտին, ի՞նչ խորհուրդ կտաք Ձեր իրավահաջորդին Հայաստանում ԵՄ դեսպանի պաշտոնում:*

***Պատասխան.*** Իմ իրավահաջորդին կառաջարկեմ Երևանից դուրս գալ և ավելի շատ ժամանակ և էներգիա ծախսել Հայաստանի մարզերում: Մարզային և տեղական ղեկավարների հետ աշխատանքը դժվար է, բայց հատուցվող: Ինչպես նշեցի, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում դրական զարգացումների իմ ընկալումը հստակորեն կապված է տեղական կառավարություններին հիմնական դերերի և լիազորությունների տրամադրման հետ, որոնք զբաղվում են ժողովրդավարական գործընթացով, տնտեսական զարգացմամբ և օրենքի գերակայությամբ: Անհրաժեշտ է ներդրումներ կատարել տեղական ինքնակառավարման մարմիններում, քանի որ նրանք գտնվում են ժողովրդավարության հիմքում: Օրինակ՝ Լեհաստանի փորձը ցույց է տալիս, որ ուժեղ տեղական իշխանությունները նպաստում են տնտեսության և հասարակության արդիականացմանը, ակտիվ են կոռուպցիայի դեմ պայքարում, հաջողությամբ ստեղծում և գրավում են ներդրումներ: Նրանք նաև այն կարևոր դերակատարներն են, որոնք ապահովում են ժամանակակից կրթության, առողջապահության և այլ հանրային ծառայությունների համարժեք տրամադրումը և մատչելիությունը:

Մի խոսքով, **ես խորհուրդ եմ տալիս, որ տեղական կառավարություններին տրվեն «ավելի շատ տարածք» և «ավելի շատ ռեսուրսներ»**: Ֆունկցիոնալ և հարկաբյուջետային ապակենտրոնացումը Հայաստանին կօգնի ակտիվացնել զարգացման դերակատարներին ամբողջ երկրով և հասնել տարածքային զարգացման ավելի հավասարակշռված արդյունքների:

*Պարոն դեսպան, շնորհակալություն հարցազրույցի համար: Խնդրում եմ ընդունեք մեր լավագույն մաղթանքները Ձեր հետագա ձեռնարկումների համար:*

***Տեխնիկական աջակցման թիմ***

1. Գինի գործակիցը եկամուտը կամ հարստությունը բաշխում է պետության բնակիչների վրա, այն անհամաչափության չափման ամենաշատ օգտագործվող եղանակն է: Որքան ցածր է գործակիցը, այնքան ավելի հավասար է եկամուտի կամ հարստության բաշխումը:
   Gini coefficient is the income or wealth distribution of a nation's residents, the most commonly used measurement of inequality. The lower the coefficient, the more equitable income or wealth distribution.
2. Բնապահպանական մարտահրավերների վերածումը հնարավորությունների. պլաստիկ թափոններից շինանյութի ստացում
   Turning Environmental Challenges into Opportunities: Introducing construction materials from plastic waste by Kapan Municipality - more information at http://urbanfoundation.am/archives/category/turning-environmental-challenges-into-opportunities
3. ՓՄՁ-ների մրցունակության բարձրացում կայուն նորարարական տեխնոլոգիաների խթանման և լայն օգտագործման միջոցով – իրականացվում է Իտալիայում Ֆլորենցիայի համալսարանի ուսուցողական և հետազոտական կազմակերպության՝ PIN S.c.r.l. կողմից
   Enhancing SME competitiveness through promotion and wider use of sustainable innovative technologies by Italian Training and Research Organization of University of Florence – PIN S.c.r.l. - more information at http://arevadzor.eu/en/the-project

still at the beginning of that road. The recent consolidation (territorial enlargement) of the local governments should be seen with an open mind, not as the aim in itself but as an opportunity to give local governments more roles, to empower them.

***Question:*** *Mr Ambassador, you have been very active in promoting regional development policy in Armenia. Can you explain why?*

***Answer:*** I come from a small town in Poland and consider myself a man from a province. Thus, I have strong recollections of how development gaps can negatively affect the people from small towns and villages causing stagnation, frustration, alienation and eventually migration. Of course, migration should never be the only option. My perspectives on regional development policy are to some extent personally inspired but more importantly, they are shaped by the leading economists and sociologists such as Thomas Piketty. In short, excessive inequalities hamper development and destroy the social fabric of a country. I have written about the impacts of inequalities on society in some of my publications.

I strongly believe in fair societies and I am greatly encouraged by the effects of public policies such as the EU cohesion policy, which have reversed extreme inequalities, as indicated by falling Gini coefficient[1], and helped the new EU Member States 'catching up' with more developed countries. Armenia can also be successful in narrowing inequalities.

***Question:*** *This year, we see many of the Pilot Regional Development Programme Grant Scheme projects which were financed by the European Union in various Armenian regions, come to conclusion. What are your reflections on these projects and their results?*

***Answer:*** I am very pleased that these pilot RD projects are bringing results. Initially, I was highly concerned about their high risks. For example, the project dealing with the recycling and productive use of plastic waste in Kapan[2], clearly required changing the prevalent culture of neglecting the human and economic impact on the natural environment and very limited capacities to manage municipal waste.

Successful conclusion of these projects is very encouraging; however, the ultimate impacts will become visible in a long-term perspective. I hope that these pilot projects will also have a mobilising effect, inspiring other projects by which public-private partnerships promoted. A good example of that is the photovoltaic energy generation in Vayots Dzor province[3], which when completed, could be easily replicated in other parts of the country. The added value of this particular initiative is that the profits from the photovoltaic power plant will be directed for development projects of the local communities, creating a positive 'chain reaction'.

While we attest the positive results of the pilot RD projects, we still need a solid evaluation and a discussion with the Government and local governments on the lessons learned to make rational conclusions for the future, improved RD policy in Armenia.

***Question:*** *Finally, as your mission to Armenia is coming to an end, what would be your advice to your successor in the position of the EU Ambassador to Armenia?*

***Answer:*** A strong recommendation to my successor is to go out of Yerevan and spend more time and energy in the Armenian provinces. Work with the regional and local leaders is challenging but rewarding. As stated before, my perception of positive developments in the countries of Central and Eastern Europe is clearly associated with giving key roles and powers to local governments which engage in democratic process, economic development and rule of law. It is necessary to invest in local governments as they are at the core of democracy. As experienced in Poland for example, strong local governments promote modernisation of the economy and society, are active in the fight against corruption, and successfully generate and attract investments. They are also the key actors in securing adequate provision and access to modern education, health care and other public services.

In short, **I strongly recommend that local governments are given 'more space' and 'more resources'.** Functional and fiscal decentralisation will help Armenia activate development actors across the country and achieve more balanced regional development outcomes.

*Mr Ambassador, thank you for the interview.*
*Please accept our best wishes for your future endeavours!*

***Technical Assistance Team***

# Հայաստանի տարածքային զարգացման ռազմավարության վերանայումը սմարթ մասնագիտացման ռազմավարության մոտեցման ինտեգրմամբ

Այս տարի (մայիս - սեպտեմբեր) ՀՀ Կառավարությունը գործընթացը ղեկավարող ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ միասին «EU4Regions: Աջակցություն Հայաստանում տարածքային զարգացման քաղաքականությանը» Եվրոպական միության տեխնիկական աջակցության ծրագրի օժանդակությամբ կսահմանի տարածքային զարգացման ավելի հավակնոտ նպատակներ՝

- ընդլայնելով քաղաքականության ծածկույթը հետազոտության և նորարարության ոլորտի վրա

-ինտեգրելով սմարթ մասնագիտացման ռազմավարության (S3) մոտեցումը:

Ինչպես նկարագրված է ստորև, ՏԶ ավանդական ոլորտները (մրցունակություն, համախմբում, շրջակա միջավայր, կառավարում-ղեկավարում և կարողություններ) այժմ ընդլայնվելու են՝ ներառելով հետազոտություններ և նորարարություններ: ԵՄ մեթոդաբանության համաձայն կընտրվեն սմարթ մասնագիտացման առաջնահերթություններ՝ Հայաստանում իրավիճակի և հետազոտության ու նորարարության համակարգի խորքային գնահատումից հետո: Կարմիր գույնով ներկայացված են Հայաստանի տարածքային զարգացման վերանայված ռազմավարության (ՀՏԶՌ) նոր տարրերը:

# Revision of Armenian Regional Development Strategy integrating the Smart Specialisation Strategy approach

This year (May-September), the Government of Armenia with the Ministry of Territorial Development and Infrastructures leading the process, with the support of the European Union technical assistance project "EU4Regions: Support to Regional Development Policy in Armenia", will set more ambitious goals for Regional Development by:

- Expanding policy coverage to the research and innovation area
- Integrating the Smart Specialisation Strategy (S3) approach.

As shown below, the traditional areas of RD (competitiveness, cohesion, environment, management – governance and capacities) will now expand to include research and innovation. Smart specialisation priorities will be selected in line with the EU methodology, following in-depth assessment of the situation and system of research and innovation in Armenia. In red colour, the new elements of the revised Armenian Regional Development Strategy (ARDS) are presented.




Այս տարի (մայիս - սեպտեմբեր) ՀՀ Կառավարությունը գործընթացը ղեկավարող ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ միասին «EU4Regions: Աջակցություն Հայաստանում տարածքային զարգացման քաղաքականությանը» Եվրոպական միության տեխնիկական աջակցության ծրագրի օժանդակությամբ կսահմանի տարածքային զարգացման ավելի հավակնոտ նպատակներ

- ընդլայնելով քաղաքականության ծածկույթը հետազոտության և նորարարության ոլորտի վրա

- ինտեգրելով սմարթ մասնագիտացման ռազմավարության (S3) մոտեցումը:

Ինչպես նկարագրված է ստորև, ՏԶ ավանդական ոլորտները (մրցունակություն, համախմբում, շրջակա միջավայր, կառավարում-ղեկավարում և կարողություններ) այժմ ընդլայնվելու են՝ ներառելով հետազոտություններ և նորարարություններ: ԵՄ մեթոդաբանության համաձայն կընտրվեն սմարթ մասնագիտացման առաջնահերթություններ՝ Հայաստանում իրավիճակի և հետազոտության ու նորարարության համակարգի խորքային գնահատումից հետո: Կարմիր գույնով ներկայացված են Հայաստանի տարածքային զարգացման վերանայված ռազմավարության (ՀՏԶՌ) նոր տարրերը:

**Հետազոտության և նորարարության գնահատում**

Վերանայված ՀՏԶՌ-ի նախնական վերլուծությունը մատնանշում է մի շարք հիմնահարցեր, որոնք պետք է հաշվի առնվեն հետազոտության և նորարարության ոլորտում.

- Ռազմավարական մոտեցում. նորարարության ռազմավարության ընդունում քաղաքական ամենաբարձր մակարդակով; հետազոտության/ կրթության/նորարարության մեջ հանրային ներդրումների առաջնահերթություն:

- Քաղաքականության խառնուրդ և շրջանակային պայմաններ. համագործակցություն տեղական, ռեգիոնալ, ազգային մակարդակների միջև համապատասխան քաղաքականությունների հարցում (Հ և Զ, նորարարություն, կրթություն, ՏՀՏ); համակարգում, քաղաքականությունների միջև հետևողականություն:

- Ձեռնարկատիրություն. պայմաններ հավասար ներդրումների, բիզնես հրեշտակների, վենչուրային կապիտալի համար; բիզնես միջավայր:

**Research and innovation assessment**

The initial analysis for the revised ARDS, indicate a number of issues to be considered under the research and innovation sphere:

- Strategic approach: endorsement of the innovation strategy at the highest political levels; prioritisation of public investment in research/education/innovation.
- Policy mix and framework conditions: cooperation between local, regional, national levels in relevant policies (R&D, innovation, education, ICT); coordination, consistency between policies.
- Entrepreneurship: conditions for equity investment, business angels, venture capital; business environment.
- Assessment and mapping of digital infrastructures and e-communication services.
- Human resources: attractiveness for researchers; mobility of research/innovation personnel between the public and private sector.
- Public sector: public procurement to foster innovation; innovations within the public sector.
- Education and research: policies to ensure proper supply and mix of skills; training on entrepreneurship; autonomy of education and research organisations; policies to support collaboration of education and research organisations with businesses; the role of Key Enabling Technologies (KETs).
- Evaluation system: institutionalisation of assessment of innovation policy and support measures; monitoring of results of innovation policy and support schemes.

## Կարողություններ տարածքային զարգացման համար

### Ծրագրերի կառավարման մեջ սովորելու խառը մոդելի օգուտները ՎՆ ծրագրերի հայեցակարգերի մշակում՝ վերապատրաստում և քոուչինգ անցնելու ընթացքում

«Պատրաստ տարածքային զարգացման ծրագրերին» կարողությունների զարգացման ծրագիրը (ՊՏԶԾ), որն իրականացվել է «EU4Regions: Աջակցություն Հայաստանում տարածքային զարգացման քաղաքականությանը» ԵՄ կողմից ֆինանսավորվող ծրագրի ներքո, կենտրոնացած էր տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ-եր՝ հիմնական թիրախային խումբ) և հասարակական կազմակերպությունների (ՀԿ-ներ՝ երկրորդային թիրախային խումբ) ներկայացուցիչների վրա, ովքեր ուղղակիորեն ներգրավված էին ռեգիոնալ և տեղական զարգացման ծրագրերի նախագծման, իրականացման և/կամ մշտադիտարկման գործում: 2018թ. հուլիս և 2019թ. փետրվար ամիսների միջև ընկած ժամանակահատվածում Ծրագրի տեխնիկական աջակցության թիմի կողմից Հայաստանի տարբեր վայրերում անցկացվել են ինտենսիվ եռօրյա դասընթացներ, հեռակա քոուչինգ և հինգ անհատական/խմբային քոուչինգ սեսիաներ: **ՊՏԶԾ ծրագրին մասնակցել է 102 մասնակից, որոնցից 87-ը հաջողությամբ ավարտել է այն:**

ՊՏԶԾ ծրագիրը հիմնված էր կոմպետենցիայի վրա, որի նպատակն էր յուրաքանչյուր սեսիայի, դասընթացների և խորհրդատվությունների միջոցով զարգացնել մի շարք կոմպետենցիաներ, որոնք անհրաժեշտ և կիրառելի են տարածքային զարգացման ծրագրերի կառավարման համար: Ծրագիրը կազմված էր կարողությունների զարգացման մեթոդների համախմբից.

- Ակտիվ վերապատրաստում – դասընթացներ գործնական վարժություններով և առաջադրանքներով
- Ուսուցում վերապատրաստումներից դուրս աշխատանքի միջոցով (տնային առաջադրանքներ և այլն)
- Խորհրդատվություններ կամ քոուչինգներ
- Գրավոր առաջադրանքներ:

## Capacities for Regional Development

### Benefits of blended learning in project management - development of project concepts while receiving training and coaching

The **'Fit for Regional Development Projects' Capacity Building Programme (FRDP)**, implemented in the frame of the EU-funded project "EU4Regions: Support to Regional Development Policy in Armenia was focused on representatives of Local Self-Governments (LGUs, primary target group) and Non-Governmental Organizations (NGOs, secondary target group), who were directly involved in designing, implementing and/or monitoring of projects in regional and local development. Between July 2018 and February 2019, 12 intensive three-day workshops, over-distance coaching and five individual/group coaching sessions were delivered by the Project Technical Assistance Team in different locations in Armenia. **The FRDP programme was attended by 102 participants of whom 87 completed the programme successfully.**

The FRDP programme was competence-based, with each training sessions, workshops and consultations aimed at developing a set of competences necessary and applicable to managing Regional Development projects. The programme consisted of a combination of capacity building methods:

- Active training – workshops with practical exercises and assignments
- Learning by work outside of training (home assignments, etc.)
- Consultations or coaching
- Written assignments.



*Դասընթաց, 2018թ. սեպտեմբերի 6-8*
*Workshop 6-8 September 2018*



*Դասընթաց, 2018թ. նոյեմբերի 22-24*
*Workshop 22-24 November 2018*



*Դասընթաց, 2018թ. հունվարի 31 - 2019թ. փետրվարի 2*
*Workshop 31 January - 02 February 2019*

### Վերապատրաստման մեթոդների ներգրավումը ծրագրի մշակման փաստացի աշխատանքի մեջ

Ապացուցված է, որ ֆորմալ վերապատրաստումն արդյունավետ գործիք է տարբեր թեմաների վերաբերյալ գիտելիքի փոխանցման և հմտությունների բարելավման համար: Ուստի դասընթացները սովորաբար ցանկացած կարողությունների զարգացման ծրագրի անխուսափելի մասն են կազմում: ՊՏԶԾ ծրագրի շրջանակներում դասընթացները կիրառել են մասնակցային աշխատանքային մեթոդներ, ինչպիսիք են՝ խմբային գործնական աշխատանքները, պրեզենտացիաները, ֆասիլիտացված պլենար քննարկումները և վարժությունները, որոնք նպաստում էին գիտելիքի ձեռքբերմանը և իմանալ-ինչու (know-how) մեթոդի կայուն փոխանցմանը: Մասնակիցները ուշադրություն էին դարձնում իրենց միջև ինտենսիվ համագործակցությանը, հմտությունների և գիտելիքների ասիմիլյացիային ու փոխանցմանը՝ այդպիսով խթանելով փորձի փոխանակմանը: Դասընթացը կենտրոնացած էր ծրագրերի կառավարման հմտությունների գործնական զարգացման վրա՝ ծրագրերի հայեցակարգերի մշակման միջոցով, որոնք ավելի ուշ կարող են ներկայացվել ֆինանսավորում ստանալու համար: Այդ նպատակով մասնակիցները աշխատեցին պրոյեկտների վրա կենտրոնացած, կամավորական փոքր աշխատանքային խմբերով, որոնք ստեղծվել էին ըստ պրոյեկտների թեմայի շուրջ ունեցած ընդհանուր հետաքրքրվածության և ըստ տեղակայման: Մասնակիցների միջև ինտենսիվ համագործակցությունն ամուր հիմք ստեղծեց ապագա ծրագրերի նախաձեռնությունների շուրջ համագործակցությունը շարունակելու համար:

### Integration of training methods into actual work on project development

Formal training has been proven to be an effective instrument for infusing knowledge and improving skills on various topics. Therefore, workshops are typically an inevitable part of any capacity building programme. The workshops within the FRDP programme applied participatory working methods, such as practical group work, presentations, moderated plenary discussions, and exercises, which contributed to the acquisition of knowledge and sustainable transfer of know-how. The participants focused on intensive co-operation among themselves, assimilating and sharing skills and knowledge and thus, fostering the exchange of experiences. The workshops focused on practical development of project management skills, through development of a project concept, which could be later submitted for funding. For that purpose, the participants worked in small project-focused voluntary working groups, that were created by their common interest in project topics and localizations. Intensive co-operation among the participants, created a solid base for continuing to collaborate on future project initiatives.

## Քոուչինգը՝ որպես կատարողականի բարելավման գործիք

Որպես լրացում վերապատրաստումներին՝ քոուչինգը շատ արդյունավետ գործիք է սովորելու համար: Քոուչինգն ուղղակիորեն վերաբերում է քոուչինգ անցած անձանց գործնական խնդիրներին և հետևաբար ունի ուղղակիորեն կիրառվող ուսումնառության արդյունք: Սա ապահովում է տրամադրված աջակցության կարևորությունն ու կայունությունը: ‚Քոուչինգը, որպես կատարողականի ֆասիլիտացիայի, ուսուցման և այլ մեթոդների զարգացման արվեստ (Դաունի, 2003թ, էջ 15), նկարագրում է մարզիչի կողմից սովորողին բացահայտելու, ավելի լավ հասկանալու ունակություն ձեռք բերելու, ավելի զգոն դառնալու, ավելի լավ որոշումներ կայացնելու և արդյունքում գործողությունները փոխելու հնարավորություն տալու գործընթացը: Ֆասիլիտացիայի այս մեթոդը տալիս է արդյունքներ երեք ոլորտներում.

- Կատարողական – քոուչինգը բխում է արդյունքներից: ՊՏԶԾ ծրագրի շրջանակներում նպատակն էր, որպեսզի ՏԻՄ-երի և ՀԿ-ների ներկայացուցիչները հասնեն ծրագրի հայեցակարգերի մշակման արդյունավետության ավելի բարձր մակարդակի:
- Սովորել – վերաբերում է նոր հմտությունների, գիտելիքի կամ վարքագծի ձեռքբերմանը, որը կարող է օգտագործվել ոչ միայն ծրագրի հայեցակարգերի համար, այլև ծրագրի ամբողջական առաջարկների և ապագայում այլ հայեցակարգերի նախապատրաստման համար:
- Զարգացում – վերաբերում է անձնական աճի և ավելի լավ ինքնագիտակցման մակարդակին, որ քոուչինգը կարող է տալ:

Արդյունավետ քոուչինգի համար պահանջվում է հմտությունների լայն շրջանակ, ինչպիսիք են՝ «ուղղորդիչ - պատմել», «ոչ ուղղորդիչ – լսել հասկանալու համար»: Այս ծայրահեղությունների ետևում գտնվող հիմնարար ենթադրությունները բևեռային են, թեև «պատմել»-ը գալիս է մի պարադիգմայից, որ «պատմողը լավագույնս գիտի և ունի պատասխանները»; իսկ «լսել»-ը ենթադրում է, որ «նյութ տրամադրողին, փորձագետին նս լսում են»:

## Վերապատրաստումն ու քոուչինգը համակցված

Որպես լրացում մի շարք վերապատրաստման միջոցառումներին՝ քոուչինգը մի գործընթաց է, որն օգնում է մասնակիցներին ավելի արդյունավետորեն սովորել: Այն արդյունավետ է, որովհետև հարմարեցվում է քոուչինգ ստացող խմբին կամ անհատին: Քոուչինգն ուղղակիորեն վերաբերում է ուսուցանվող մասնակիցների գործնական հարցերին, և հետևաբար կունենա ուսումնառության ուղղակի կիրառելի արդյունք: Հետազոտությունների համաձայն՝ ուսումնառության մոտ 70%-ը տեղի է ունենում աշխատավայրում: Այն դեպքում, երբ վերապատրաստումը տրամադրում է ընդհանուր տեղեկատվություն, որը նպատակաուղղված է մասնակիցների ավելի լայն խմբին, քոուչինգը հարմարեցվում է նրան, ով դրա կարիքն ունի ճիշտ ժամանակին, և անհատական հետադարձ կապի հնարավորություն է տալիս: Որպես ուսումնառության գործիք՝ այն չի փոխարինում վերապատրաստմանը, բայց փոխլրացման միջոցով լրացուցիչ արժեք է տալիս, քանի որ այն երկարատև արդյունքների և բարելավված կատարողականի հնարավորություն է տալիս:

